

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՆԻ

ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ. 00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան - 2013

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГЕВОРГЯН ГЕГАМ ВАРДАНОВИЧ

ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ  
КОНЦЕНТРАЦИИ В ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата  
юридических наук по специальности 12.00.02 "Публичное право –  
конституционное, административное, финансовое, муниципальное,  
экологическое, европейское право, государственное управление"

Ереван - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման  
ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Վ.Վ. Ստեփանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան  
իրավ. գիտ. թեկնածու  
Ա.Գ. Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ «Հայաստանում ֆրանսիական  
համալսարան» հիմնադրամ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2013թ.-ի հունիսի  
14-ին, ժամը 14<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի  
իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան,  
Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական  
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2013թ.-ի մայիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Академии Государственного Управления РА

Научный руководитель: доктор юридических наук,  
профессор В.В. Степанян

Официальные оппоненты: доктор юридических наук,  
профессор Г.Б. Даниелян

кандидат юридических  
наук А.Г. Саргсян

Ведущая организация: Фонд "Французский университет в Армении"

Защита состоится 14 июня 2013г., в 14<sup>00</sup> часов на заседании  
специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском  
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных  
работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 14 мая 2013 г.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук, доцент

А.Г. Вагаршян

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Մրցակցությունը հանդիսանում է շուկայական տնտեսության հիմնական մեխանիզմը, որպեսզի առաջարկի սպառողներին ապրանքներ և ծառայություններ ամենաշահեկան պայմաններով: Այն խթանում է արդյունավետությունը և նորարարությունը, իջեցնում է գները: Արդյունավետ լինելու համար մրցակցությունը պահանջում է, որ տնտեսավարող սուբյեկտները գործեն միմյանցից անկախ, սակայն մյուսների կողմից մրցակցային ճնշման ներքո: Եվրոպական Միության տնտեսական ինտեգրման հենքերից մեկը տնտեսական մրցակցության պաշտպանությունն է, ինչն ամրագրված է նաև հիմնադիր պայմանագրերում: Տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնական բաղադրիչներից է հանդիսանում նաև տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացման իրավական կարգավորումը:

Անընդհատ ընդլայնվող եվրոպական միասնական շուկայի պայմաններում համակենտրոնացումը ԵՄ-ում այն ինստիտուտներից մեկն է, որի զարգացումը հանդիսանում է եվրոպական իրավունքի խնդիրը: Տարբեր սուբյեկտների կողմից կատարվող համակենտրոնացումների ծավալը ցույց է տալիս այս կամ այն պետության տնտեսական զարգացման բնույթը և որակը: Այնպիսի վերազգային կառույցի համար, ինչպիսին է Եվրոպական Միությունը, տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացման ոլորտում իրավական կարգավորումն ունի առանձնահատուկ նշանակություն: Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը կարող է ընդլայնել շուկան և խթանել տնտեսության աճը, միևնույն ժամանակ այն կարող է սահմանափակել մրցակցությունը: Տարբեր տնտեսավարող սուբյեկտների գործունեության և ուժերի համատեղումը կարող է թույլատրել նրանց, օրինակ, ավելի արդյունավետ մշակել նոր արտադրատեսակներ կամ կրճատել արտադրության կամ բաշխման ծախսերը: Երբեմն համակենտրոնացման արդյունքում և շնորհիվ բարձրացված արդյունավետության շուկան դառնում է ավելի մրցունակ, և սպառողները հնարավորություն են ունենում ձեռք բերել բարձր որակի ապրանք հարմարավետ գներով:

Այնուամենայնիվ, համակենտրոնացումները հաճախ նաև կարող են սահմանափակել մրցակցությունը շուկայում, որպես կանոն, գերիշխող դիրքի հանգեցնելու կամ գերիշխող դիրքն ամրապնդելու միջոցով: Այն կարող է վնասել օգտագործողներին և սպառողներին՝ հանգեցնելով բարձր գների, ընտրության նվազեցման կամ նորարարության բացակայության: Եվրոպական միասնական շուկայի ընդլայնման և գլոբալիզացիայի շրջանակներում մրցակցության ուժեղացումը ստիպում է տնտեսավարող սուբյեկտներին քայլեր ձեռնարկել, որպեսզի դիմակայեն մրցակցությանը, այդ պայքարում ամրապնդեն իրենց դիրքերը կամ ինչու ոչ խուսափեն մրցակցությունից, ինչն ավելի գրավիչ է դարձնում տնտեսավարող սուբյեկտների կողմից ուժերի համատեղումը: Այդպիսի վերակազմակերպումներն ողջունվում են այն

հանգամանքներում, որ վերջիններս չեն սահմանափակում և խոչընդոտում մրցակցությանը, կարող են բարձրացնել Եվրոպական արդյունաբերության մրցունակությունը, հանգեցնել կյանքի որակի բարձրացմանը ԵՄ անդամ պետություններում: Համակենտրոնացումների կարգավորման նպատակը մրցակցության վրա դրա բացասական ազդեցության կանխարգելումն է: Համակենտրոնացումները, որոնք դուրս են գալիս ցանկացած անդամ պետության ազգային սահմաններից, ենթակա են կարգավորման Եվրոպական մակարդակում: Սա հնարավորություն է տալիս տարբեր անդամ պետությունների տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին ստանալու համակենտրոնացման թույլտվություն մեկ վայրից:

Եթե տնտեսավարող սուբյեկտների միասնական տարեկան շրջանառությունը գերազանցում է սահմանված շեմը, ապա համակենտրոնացման վերաբերյալ հայտարարագիրը ենթակա է ներկայացման Եվրոպական հանձնաժողով: Սահմանված շեմից ներքև գտնվող համակենտրոնացումները ենթակա են հայտարարագրման ազգային մրցակցային մարմիններում: Եվրոպական Հանձնաժողովը կարող է նաև ուսումնասիրել համակենտրոնացումները, որոնք նրան են փոխանցվել անդամ պետությունների կողմից: Համապատասխան հանգամանքների առկայության պարագայում Հանձնաժողովը ևս համակենտրոնացման ուսումնասիրման գործը կարող է փոխանցել անդամ պետությունների ազգային մրցակցային մարմիններին:

Հայտարարագրված բոլոր համակենտրոնացումներն ուսումնասիրվում են ԵՄ-ում արդյունավետ մրցակցության վրա դրանց ազդեցությունը պարզելու նպատակով: Եթե համակենտրոնացումներն էական ազդեցություն չեն ունենում շուկայի վրա, ապա նրանք առանց նախապայմանների հաստատվում են, իսկ եթե ունենում են, ապա պետք է արգելվեն, որպեսզի պաշտպանեն բիզնեսները և սպառողներին բարձր գներից կամ ապրանքների և ծառայությունների սահմանափակ ընտրությունից:

Խորացող տարածաշրջանային ինտեգրացիան պահանջում է անընդհատ զարգացում համաեվրոպական և ազգային օրենսդրության շրջանակներում: ԵՄ-ի փորձը կարող է օգտագործվել վերոնշյալ ոլորտում ՀՀ օրենսդրության զարգացման համար, իսկ հայրենական օրենսդրության բարելավումը և անհրաժեշտ իրավակիրառ պրակտիկայի ձևավորումն էլ իր հերթին առավել դյուրին ու շահեկան կդարձնի միջազգային ինտեգրացիոն գործընթացները: Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ համագործակցությունը նշանակալիորեն կնպաստի մրցակցության օրենսդրության, իրավական նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը ԵՄ չափանիշներին: Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ շարունակվում է համագործակցությունը ԵՄ մրցակցության օրենսդրության հիմնական դրույթների ներկայացման և մոտարկման ուղղությամբ: Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը ներկայիս պայմաններում հանդիսանում է ունիվերսալ գործիք համաշ-

խարհային առևտրային շրջանառության զարգացման համար: Այդ առևտրային գործընթացի մեջ Հայաստանի Հանրապետությանը ներգրավելու համար անհրաժեշտ է եվրոպական փորձի ավելի խորն ուսումնասիրություն:

Նշված հիմնախնդիրների, միտումների և առանձնահատկությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը, աշխատանքում բարձրացված հարցադրումների վերաբերյալ համապարփակ աշխատանքի առկայության կարևորությունն էլ պայմանավորել են ատենախոսության թեմայի ընտրությունը, աշխատանքի կառուցվածքը, առաջ քաշված խնդիրների հետազոտման խորությունը և վերջին հաշվով թեմայի արդիականությունը և հրատապությունը:

**Թեմայի գիտական հետազոտման աստիճանը:** Համակենտրոնացման իրավական կարգավորման հիմնախնդիրները լայնորեն ուսումնասիրվել են արտասահմանյան, մասնավորապես արևմտյան իրավագետների կողմից: Այնուամենայնիվ, մինչ այսօր առկա են դրա կարգավորման վերաբերյալ թե՛ տեսական, թե՛ գործնական լուրջ խնդիրներ: Բացի այդ, հաշվի առնելով ուլորտի դինամիկ զարգացումը՝ անհրաժեշտություն է առաջանում այն ապահովել համապատասխան իրավական հենքով: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ որոշ հիմնախնդիրների վերաբերյալ, օրինակ՝ «համակենտրոնացում» հասկացության, համատեղ ձեռնարկությունների կարգավորման, համապատասխան շուկայի որոշման չափանիշների վերաբերյալ չկան համալիր գիտական հետազոտություններ: Իսկ ինչ վերաբերում է համակենտրոնացումների կարգավորման վերաբերյալ տեղական և տարածաշրջանային գիտական հետազոտություններին, ապա պետք է արձանագրել, որ դրանք գրեթե բացակայում են:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Ատենախոսության հետազոտության օբյեկտը Եվրոպական Միությունում համակենտրոնացումների իրավական կարգավորման տեսական և գործնական հիմնախնդիրներն են: Հետազոտության առարկա են հանդիսանում Եվրոպական Միությունում մրցակցային օրենսդրության, մասնավորապես, համակենտրոնացումների համատեքստում, ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, համակենտրոնացումները կարգավորող համաեվրոպական և ազգային օրենսդրությունները, «համակենտրոնացում», «համակենտրոնացման մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտ», «համապատասխան շուկա» հասկացությունները, համակենտրոնացման վերաբերյալ օրենսդրության խախտումները և դրանց հետևանքները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել համակենտրոնացման իրավական բնույթը, վեր հանել այս ինստիտուտի զարգացման հիմնական ուղղությունները և օրինաչափությունները, ուսումնասիրել համակենտրոնացումների զարգացման պատմական գենեզիսը, դրանց կարգավորումների առանձնահատկությունները Եվրոպական Միությունում և անդամ պետություններում, վերլուծել հա-

մակենտրոնացումների կարգավորման հայեցակարգային և մեթոդական հիմնախնդիրները, առաջարկել մրցակցության բարձրացման գիտականորեն հիմնավորված կառուցակարգեր: Ատենախոսության նպատակն է նաև ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում մրցակցության ինդեքսը, համակենտրոնացման կարգավորման առկա իրավիճակը և գնահատել դրա հետագա փոփոխման ու զարգացման հեռանկարները, ինչպես նաև հաշվի առնելով տվյալ ոլորտում եվրոպական փորձը՝ ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում մրցակցության, մասնավորապես տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացման իրավական կարգավորման ուղղությունների վերաբերյալ:

**Հետազոտության նպատակով պայմանավորված՝ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.**

- ուսումնասիրել համակենտրոնացումների հետ կապված հարաբերությունների ձևավորման և զարգացման օրինաչափությունները պատմական գենեզիսի համատեքստում,

- ուսումնասիրել «համակենտրոնացում» հասկացությունը, դրան տրված տարբեր բնորոշումները, վեր հանել դրա առանձնահատկությունները՝ արդյունքում մշակելով «համակենտրոնացում» հասկացության միասնական բնորոշում,

- ուսումնասիրել համատեղ ձեռնարկությունների կարգավորման առանձնահատկությունները և ներկայացնել առաջարկություններ դրանց վերաբերյալ,

- վերլուծել մրցակցության և, մասնավորապես, համակենտրոնացման հետ կապված հարաբերություններում կիրառվող տերմինաբանությունը, ներկայացնել տարբեր իրավական համակարգերում դրանց բնորոշումները,

- ուսումնասիրել համակենտրոնացման տեսակները, վեր հանել դրանց նմանությունները և առանձնահատկությունները տեսական և գործնական տեսանկյունից,

- համեմատական վերլուծության միջոցով վեր հանել համակենտրոնացման իրավական կարգավորման բնորոշ գծերը և առանձնահատկությունները,

- ուսումնասիրել համակենտրոնացման իրավական կարգավորման առանձնահատկությունները Եվրոպական Միությունում և անդամ պետություններում, մշակել հիշյալ ինստիտուտի և դրա առանձնահատկությունների վերաբերյալ միասնական մոտեցում,

- հետազոտել համակենտրոնացման առկա կարգավորման ազդեցությունը գործարար միջավայրի վրա, ներկայացնել առաջարկություններ դրա բարելավման ուղղությամբ,

- ուսումնասիրել համակենտրոնացումների մեջ ներգրավված սուբյեկտային կազմը, դրանց առանձնահատկությունները,

- հետազոտել համակենտրոնացումների հայտարարագրման գործըն-

թացում առաջացող առկա խնդիրները,

- ուսումնասիրել համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների իրավասությունները, Եվրոպական Միության և անդամ պետությունների ազգային մարմինների համագործակցության եզրերը, դրանց թերությունները և ձեռքբերումները,

- ուսումնասիրել համակենտրոնացման վերաբերյալ օրենսդրության խախտումները, դրա հետևանքները և կիրառվող պատասխանատվության միջոցները,

- վեր հանել այս հարաբերությունները կանոնակարգող օրենսդրությունում առկա հակասությունները, բացերը և խնդիրները, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ այդ հարաբերությունների գործնական կիրառման և դրա հետագա զարգացման համար,

- մշակել և ներկայացնել տեսական հիմնավորումներ համակենտրոնացումը կանոնակարգող օրենսդրության հետագա կատարելագործման ուղղությամբ,

- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում տվյալ ոլորտում առկա կարգավորումները, առանձնահատկությունները, խնդիրները և Եվրոպական փորձի համատեքստում մշակել և ներկայացնել լուծումներ ու առաջարկություններ:

**Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը:** Ատենախոսության հետազոտության աղբյուրներից հատկապես կարելի է առանձնացնել հետևյալը.

1. Եվրոպական Միությունում մրցակցային իրավունքի վերաբերյալ աշխատությունները,
2. Եվրոպական Միությունում համակենտրոնացումների իրավական կարգավորմանը նվիրված աշխատությունները,
3. ընդհանուր իրավաբանական գրականությունը,
4. հետազոտության օբյեկտին առնչվող իրավական ակտերը (ԵՄ և ազգային), պաշտոնական պարզաբանումները, ուղեցույցները, դատական նախադեպերը, պաշտոնական վիճակագրությունը, ինչպես նաև պաշտոնական այլ փաստաթղթեր, զեկույցներ,
5. ոլորտի վերաբերյալ առկա նախադեպային իրավունքը,
6. միջազգային հետազոտական ինստիտուտների և տնտեսավարող սուբյեկտների հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող համեմատական վերլուծությունները:

**Ատենախոսության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես համընդհանուր և համատեսական մեթոդներ, ինչպիսիք են դիալեկտիկայի և պատմական մեթոդները, ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը, աբստրակցիան, այնպես էլ հատուկ մեթոդներ, ինչպիսիք են համեմատական-իրավական մեթոդը, համակարգակառուցվածքային, լեզվատրամաբանական, կոնկրետ-սոցիոլոգիական մեթոդ-

ները: Այս մեթոդների համակցված կիրառումը հնարավորություն է տվել բացահայտելու Եվրոպական Միությունում և անդամ պետություններում համակենտրոնացման իրավական կարգավորման առանձնահատկությունները, առկա խնդիրները և առաջարկելու հիշյալ ոլորտի կարգավորման արդյունավետ կառուցակարգային լուծումներ:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ համակարգային կերպով ուսումնասիրվել են համակենտրոնացումների հետ կապված իրավահարաբերությունները, դրա գործնական և տեսական հիմնախնդիրները, ինչպես Եվրոպական Միությունում, այնպես էլ անդամ պետություններում առկա խնդիրները, տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը: Ինքնուրույն բնույթ են կրում օրենսդրության կատարելագործման վերաբերյալ մեր կողմից ներկայացվող առաջարկները: Հետազոտության մեջ տեղ են գտել նաև Հայաստանի Հանրապետությունում համակենտրոնացման իրավական կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությունը և դրանց կատարելագործման ուղղությամբ կատարված առաջարկությունները, ինչը հանդիսանում է տվյալ ոլորտում կատարված առաջին աշխատանքը:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները:**

1. Լիովին ֆունկցիոնալ համատեղ ձեռնարկության (full-function joint venture) (համատեղ ձեռնարկություն, որը ձևավորվել է երկար ժամկետով և տիրապետում է անկախ տնտեսական միավորի բոլոր ֆունկցիաներին) նկատմամբ օրենսդրությամբ սահմանված շրջանառության չափանիշները որոշելու ժամանակ հաշվի է առնվում բոլոր հիմնական ընկերությունների շրջանառությունը: Այսպիսով, համակենտրոնացումը, որը կապված է համատեղ ձեռնարկությունում վերահսկողության փոփոխման կամ նոր համատեղ ձեռնարկության ստեղծման հետ, կարող է բավարարել օրենսդրությամբ սահմանված շրջանառության չափանիշներին՝ պարզապես հիմնվելով հիմնական ձեռնարկությունների շրջանառության վրա: Արդյունքում հնարավոր է, որ համատեղ ձեռնարկությունը, որի գործարարական գործունեությունը որևէ կապ չունի ԵՄ-ի հետ կամ չունի էական ազդեցություն Միության շուկայի վրա, կընկնի ԵՄ համակենտրոնացումների կարգավորման ներքո բացառապես ԵՄ շրջանառության հետ չկապված հիմնական ընկերությունների շրջանառության հիման վրա: Նման համակենտրոնացումների հայտարարագրման հետ կապված ժամանակի և այլ ռեսուրսների ծախսը համարում ենք ավելորդ բեռ տնտեսավարող սուբյեկտների և Հանձնաժողովի վրա: Խնդիրը կարելի է լուծել՝ սահմանելով, որ համակենտրոնացումները, կապված համատեղ ձեռնարկությունների հետ, հանդիսանում են 139/2004 կանոնակարգի ուսումնասիրության առարկա, եթե վերջիններս Եվրոպական Միությունում ունենում են որոշակի աստիճանի շրջանառություն: Սա կտա հնարավորություն զերծ մնալու ընդհանուր շուկայի վրա էական ազդեցություն չունեցող full-function համատեղ ձեռնարկությունների հայտարարագրու-



մից:

2. 139/2004 կանոնակարգի 4(5)-րդ հոդվածը սահմանում է համայնքային մեծություն չունեցող և առնվազն երեք անդամ պետությունների՝ ազգային օրենսդրության ուսումնասիրության ենթակա համակենտրոնացման Հանձնաժողովի ուսումնասիրության հանձնելու կարգը: Սակայն անդամ պետություններից որևէ մեկը կարող է առարկել նման գործընթացի դեմ: 4(5)-րդ հոդվածի կիրառումն ավելի արդյունավետ դարձնելու համար անդամ պետությունների վետոյի իրավունքը պետք է բացառել: Վետոյի իրավունքի բացառումը կողմերին կտա նաև ժամանակի խնայում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր գործ քննելու իրավասու անդամ պետություն ունի Հանձնաժողովի կողմից ծանուցումը ստանալու պահից սկսած 15 աշխատանքային օր իր համաձայնությունը հայտնելու համար (հնարավոր է՝ կապված ոչ աշխատանքային օրերի հետ՝ այդ ժամկետները տարբեր լինեն), ապա կարելի է ենթադրել, որ վետոյի իրավունքը հանդիսանում է լուրջ խոչընդոտ: Բացի այդ, այն հնարավորություն կտա կողմերին օգտվելու մեկ պատուհանի սկզբունքից: ԵՄ-ում առկա համագործակցության բարձր մակարդակի պայմաններում վետոյի իրավունքն ավելորդ բնույթ է կրում, իսկ անդամ պետությունների իրավասու մարմիններն իրենց իրավասությունը կպահպանեն 139/2004 կանոնակարգի 9-րդ հոդվածի ներքո, որն այլընտրանքային հնարավորություն է տալիս՝ ազգային օրենսդրությունը պահպանելու համար:

3. 139/2004 կանոնակարգի 22-րդ հոդվածը սահմանում է, որ մեկ կամ ավելի անդամ պետություններ կարող են դիմել Հանձնաժողովին՝ քննելու ցանկացած համակենտրոնացում, որը չունի Համայնքային մեծություն, սակայն ազդում է անդամ պետությունների միջև առևտրի վրա և սպառնում է էականորեն ազդել դիմող անդամ պետության կամ պետությունների տարածքում մրցակցության վրա: 22-րդ հոդվածի կիրառման հետ կապված խնդիրներից խուսափելու նպատակով այն պետք է կիրառել միայն համապատասխան ազգային օրենսդրության բացակայության կամ ազգային մրցակցային մարմինների՝ համապատասխան լիազորություններով օժտված չլինելու դեպքում: Միևնույն ժամանակ 22-րդ հոդվածի կիրառումը պետք է կրի ժամանակավոր բնույթ, և ԵՄ շրջանակում համակենտրոնացումների մասին օրենսդրության մոտարկման որոշակի աստիճանի դեպքում այն պետք է ուժը կորցրած ճանաչվի:

4. Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների համագործակցության բարելավման, ինչպես նաև դրանց առջև կանգնած խնդիրների արդյունավետ լուծման նպատակով առաջարկվում է.

1) ավելի մանրամասն և գործնական դրույթներ սահմանել, թե ինչպես ազգային մրցակցային մարմինների միջև սերտ համագործակցությունը պետք է տեղի ունենա: Սա ոչ միայն կողմերի համար հստակություն

կմտցնի, այլև նրանց կխրախուսի համագործակցելու կոնկրետ գործընթացներում,

2) ապակենտրոնացումն իր նպատակին հասցնելու և մրցակցային կանոններն ավելի հստակ կիրառելու համար անհրաժեշտ է ավելի հստակ լիազորություններ տալ ազգային մրցակցային մարմիններին: Նաև պետք է տարանջատել վերահսկողության իրականացման տարբեր փուլերում ընդգրկված մարմիններ, ինչն ավելի ժողովրդավար կդարձնի համակենտրոնացումների ուսումնասիրությունը,

3) բոլոր այն դեպքերում, երբ անձը համաձայնվել է տալ տեղեկատվություն Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվող համակենտրոնացման վերաբերյալ, պետք է լինի պատասխանատվություն սխալ կամ մոլորեցնող տեղեկատվություն տալու համար, ինչը կկանխարգելի համապատասխան անձանց կողմից նման իրավասության օգտագործման չարաշահումը,

4) միավորել ինչպես որոշմամբ, այնպես էլ հասարակ պահանջի տեսքով պահանջվող տեղեկատվության սխալ, ոչ ամբողջական տրամադրելու, չտրամադրելու կամ մոլորեցնող տեղեկատվություն տրամադրելու համար սահմանված պատասխանատվությունը: Պետք է տուգանք նշանակվի ոչ ամբողջական տեղեկատվության տրամադրման կամ սահմանված ժամկետում դրա չտրամադրման համար, քանի որ ժամանակահատված սահմանվում է ինչպես որոշմամբ, այնպես էլ հասարակ պահանջով տեղակատվության տրամադրման ժամանակ,

5) տուգանքների նշանակման մասով նախատեսել 1/2003 կանոնակարգի և դրա վերաբերյալ ընդունված ուղեցույցների կիրառումը համակենտրոնացումների նկատմամբ, քանի որ համակենտրոնացման գործերում տուգանքների նշանակման վերաբերյալ առանձին ուղեցույցներ չկան:

5. Համակենտրոնացման մեջ ընդգրկվող գործարքների, դրանց ծավալների, համակենտրոնացման ուսումնասիրման ընթացակարգի, կիրառվող պատասխանատվության միջոցների վերաբերյալ մի շարք հարցերում ԵՄ անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցումը չի հանգեցրել ցանկալի արդյունքի՝ կապված դրանց միասնական կիրառման հետ, իսկ որոշ դեպքերում բերել է նույնիսկ դրանց տարաբնույթ կարգավորմանը, ինչը, իհարկե, չի կարող բացասական չանդրադառնալ տնտեսավարող սուբյեկտների մրցունակության վրա: Այսպիսով, պետք է շարունակել մրցակցության, մասնավորապես համակենտրոնացումների կարգավորման ոլորտում ԵՄ և անդամ պետությունների ներդաշնակեցման գործընթացը՝ առաջնահերթություն տալով վերազգային կարգավորումներին:

6. ԵՄ-ում համապատասխան շուկայի սահմանները որոշելիս բավական մեծ աշխատանք է կատարվել, սակայն դեռևս առկա են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, շուկայի սահմանման մասին պարզաբանման մոտեցումը համապատասխան շուկայի սահմանման առումով թողնում է հայեցողական մոտեցման դրսևորման մեծ հնարավորություն և գործնականում բավական

դժվար է տնտեսավարող սուբյեկտների համար հասկանալ, թե իրենց ապրանքները արդյոք պատկանում են միևնույն շուկային, թե ոչ, ինչն իր հերթին հանգեցնում է համակենտրոնացման վերաբերյալ չհայտարարագրման կամ ունենում է հակառակ ռեակցիան՝ ավելորդ տուգանքներից խուսափելու համար առանց լուրջ վերլուծություն կատարելու համակենտրոնացման հայտարարագրման: Պետք է նշենք, որ և՛ առաջին, և՛ երկրորդ դեպքը բավականաչափ անբարենպաստ է: Մասնավորապես, ավելորդ հայտարարագրման ժամանակ լրացուցիչ աշխատանքներ են առաջանում և՛ Հանձնաժողովի, և՛ տնտեսավարող սուբյեկտի մոտ: Խնդիրն ինչ-որ չափով կարելի է լուծել համապատասխան շուկայի սահմանները որոշելիս՝ Հանձնաժողովի կողմից որոշակի հանգամանքների միջև հիերարխիա սահմանելով: Մասնավորապես, առավել կարևոր նշանակություն ունեն ապրանքների գործածական նշանակությունը և գինը: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այստեղ խնդիրները շատ ավելին են: Պետական հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 190-Ն որոշումը որոշակի դրույթներ է սահմանում ապրանքային շուկայի սահմանների որոշման կարգի վերաբերյալ, սակայն, ինչպես արդեն նշել ենք, այն բավական թերի է: Մասնավորապես, պետք է սահմանել ապրանքի հատկանիշների հիման վրա շուկայի սահմանները որոշելու սկզբունքի կիրառությունը նաև աշխարհագրական սահմանները որոշելիս: Երկրորդ՝ պետք է սահմանել դրանց բովանդակությունը, հիերարխիան, ինչպես նաև գնի փոքր, բայց կայուն աճի կիրառման մեխանիզմները: Խնդիրն ավելի է կարևորվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում լայն իրավակիրառ պրակտիկա ինչպես Հանձնաժողովի, այնպես էլ դատարանի կողմից տվյալ ոլորտում չկա:

7. Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ ևս առկա են խնդիրներ կապված համակենտրոնացման հասկացության և դրա բովանդակության հետ: Բաց են մնացել այն դեպքերը, երբ կողմերը կանոնադրության մեջ (կամ պայմանագրով) սահմանում են դրույթներ, որոնք, փաստացի, հանգեցնում են համակենտրոնացման, կամ նման համակենտրոնացում տեղի է ունենում գործող օրենսդրության ուժով: Համակենտրոնացում է համարվում տնտեսավարող սուբյեկտների ցանկացած միավորում, որի շնորհիվ մեկ տնտեսավարող սուբյեկտը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել մեկ ուրիշի որոշումների կայացման կամ մրցունակության վրա, ինչն անհասկանալի է և կիրառման ժամանակ տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք կարող է տալ: Այս և մի շարք այլ խնդիրներ լուծելու համար առաջարկում ենք սահմանել մեկ կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների կողմից մեկ այլ տնտեսավարող սուբյեկտի կամ դրա մի մասի ուղղակի կամ անուղղակի վերահսկողության ցանկացած միջոցի ձեռքբերման տարբերակը, որը նախ կընդգրկեր համակենտրոնացման մի շարք դեպքերը և գործնականում որոշակիություն կմտցներ: Վերջապես այն նաև հնարավորություն կտար

տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմնին՝ Հանձնաժողովին, ինչպես նաև դատարաններին կոնկրետ գործով յուրահատուկ մոտեցում ցուցաբերելու և ամեն դեպքում վեր հանելու այս կամ այն գործարքի համակենտրոնացում լինել կամ չլինելը: Կարգավորման անհրաժեշտություն ունի նաև համատեղ ձեռնարկությունների համակենտրոնացումը, որոնց վերաբերյալ դրույթները բացակայում են:

8. Ի տարբերության ԵՄ-ի օրենսդրության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը սահմանում է տնտեսավարող սուբյեկտի հասկացությունը: Հասկացության մեջ առկա են որոշակի խնդիրներ: Որպես տնտեսավարող սուբյեկտ՝ հանդես են գալիս նաև ներկայացուցիչը, ներկայացուցչությունը, մասնաձյուղը: Սակայն, ներկայացուցչությունները և մասնաձյուղերն իրավաբանական անձինք չեն, գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրությունների հիման վրա, նրանց ղեկավարները նշանակվում են իրավաբանական անձի կողմից և գործում են լիազորագրի հիման վրա: Ներկայացուցչությունների և մասնաձյուղերի պարտավորություններով պատասխանատու է ստեղծող իրավաբանական անձը: Ստացվում է, որ ներկայացուցիչը, ներկայացուցչությունները կամ մասնաձյուղերը հանդես են գալիս մեկ ուրիշի անունից և վերջինիս համար էլ ձեռք են բերում իրավունքներ և ստանձնում պարտականություններ: Նման պայմաններում անհասկանալի է, թե ինչպես են ներկայացուցիչները, ներկայացուցչությունները կամ մասնաձյուղերը հանդիսանալու տնտեսավարող սուբյեկտներ տնտեսական մրցակցության օրենսդրության իմաստով: Ինչ վերաբերում է համակենտրոնացման սուբյեկտ ներկայացուցչությանը կամ մասնաձյուղին ձանաչելուն, ապա այստեղ պետք է նշենք, որ համակենտրոնացման վերաբերյալ որոշում կարող է ընդունել հիմնական ընկերությունը, և հենց հիմնական ընկերությունն էլ հանդիսանում է համակենտրոնացման մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտ: Գործող օրենսդրությամբ տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև առևտրային ցանցը: Առևտրային ցանց է հանդիսանում երկու կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբը, որոնք գտնվում են ընդհանուր կառավարման ներքո կամ գործում են միևնույն առևտրային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո: Սրա էությունը կայանում է նրանում, որ տնտեսավարող սուբյեկտ է հանդիսանում ոչ թե իրավաբանական անձը, այլ վերջինիս պատկանող առևտրային ցանցը: Դժվար է համաձայնել նման մոտեցման հետ, քանի որ առևտրային ցանցի մեջ մտնող առևտրային օբյեկտներն օժտված չեն տնտեսական ինքնուրույնությամբ և չեն կարող որոշել իրենց տնտեսական գործունեության ուղղությունը: Այս խնդիրները վերացնելու նպատակով «տնտեսավարող սուբյեկտ» հասկացությունը պետք է սահմանել որպես կոնկրետ իրավիճակում ինքնուրույն տնտեսական գործունեություն իրականացնող ցանկացած անձ անկախ նրա իրավական կարգավիճակից:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը կայանում է**

նրանում, որ համալիր ուսումնասիրության են ենթարկվել տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացման ընթացքում առաջացող հարաբերությունները, դրանք կանոնակարգող իրավական ակտերը և գիտամեթոդաբանական աղբյուրները: Հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները կարող են օգտակար լինել ինչպես Եվրոպական Միության և անդամ պետությունների գործող օրենսդրության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործմանն ուղղված քայլերի մշակման ժամանակ: Ուսումնասիրության արդյունքերը կարող են օգտակար լինել նաև տնտեսավարող սուբյեկտների համար գործնականում համակենտրոնացումների հետ առնչվելիս, ինչպես նաև դատական պրակտիկայում այս հարաբերությունների հետ կապված վեճերը լուծելիս: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև մրցակցային իրավունքի հետ կապված առարկաների դասախոսություն և գործնական պարապմունքներ անցկացնելիս:

**Հետազոտության արդյունքերի փորձարկումը:** Հետազոտության արդյունքերն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, ինչպես նաև հաշվի են առնվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի ապրիլի 12-ի օրենքը և 2012 թվականին շրջանառության մեջ դրված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը մշակելիս:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 6 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ցանկից:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **առաջին գլուխը** (Համակենտրոնացման հասկացությունը և այն կարգավորող եվրոպական իրավունքի զարգացումը) բաղկացած է երկու պարագրաֆից:

**Առաջին գլխի առաջին պարագրաֆում`** «Համակենտրոնացման հասկացությունը և տեսակները Եվրոպական Միությունում» վերտառությամբ, բա-

ցահայտվում է համակենտրոնացման հասկացության էությունը և բովանդակությունը: Մանրամասն ուսումնասիրվում են համակենտրոնացման մեջ ներառվող գործարքները, վերլուծվում են միաձուլման, վերահսկողության ձեռք բերման, համատեղ ձեռնարկության բնորոշ գծերը, դրանց առանձնահատկությունները: Պարագրաֆում քննարկվում են միանձնյա և համատեղ վերահսկողության ձեռք բերման հետ կապված տեսական և գործնական խնդիրները: Համատեղ ձեռնարկության վերաբերյալ դրույթները քննարկելիս հեղինակը գալիս է եզրահանգման, որ համատեղ ձեռնարկությունը, որպեսզի համարվի համակենտրոնացում, պետք է տևական հիմքի վրա իրականացնի անկախ տնտեսական միավորի բոլոր գործառույթները և, որպես այդպիսին, պետք է չունենա համակենտրոնացման մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների մրցակցային վարքագծի համակարգման նպատակ կամ չհանդիսանա այդպիսի համակարգման հետևանք:

Միաժամանակ հեղինակն արձանագրում է, որ համակենտրոնացման հասկացության սահմանումը հանդիսանում է գլխավոր գործիքներից մեկը, որով որոշվում է կոնկրետ գործարքի եվրոպական մրցակցային օրենսդրության կարգավորման ազդեցության տակ ընկնելը և դրա նկատմամբ Եվրոպական գործունեության մասին պայմանագրի 101-րդ և 102-րդ հոդվածների կիրառումը: Այս համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ համակենտրոնացման հասկացության առումով ԵՄ և ԵՄ անդամ պետությունների շրջանակում առկա են որոշակի տարբեր մոտեցումներ: Հեղինակը եզրակացնում է, որ ԵՄ-ում մրցակցային կանոնների արդյունավետ կիրառման, Հանձնաժողովի և ազգային մրցակցային մարմինների կողմից համապատասխան հսկողության իրականացման, ընթացակարգային և իրավական հստակեցում մտցնելու նպատակով վերոնշյալ հարցերում անհրաժեշտ է ներդաշնակեցում: Պարագրաֆում նաև մանրամասն ներկայացվում են այն սահմանաչափերը, որոնց գերազանցման դեպքում համապատասխան գործարքը մեխանիկորեն պետք է վերաբերի բացառապես Հանձնաժողովի իրավագործությանը, այսպես կոչված Համայնքային մեծության վերաբերյալ դրույթները:

Ներկայացված են նաև հորիզոնական, ուղղահայաց և կոնգլոմերատ տնտեսական համակենտրոնացումների առանձնահատկությունները, իսկ պարագրաֆի վերջում հեղինակը վերլուծել է նաև Հայաստանի Հանրապետությունում համակենտրոնացման հասկացության և դրա տեսակների առանձնահատկություններն ու խնդիրները և եկել է մի շարք եզրահանգումների: Նախ՝ ակտիվների և փայաբաժինների ձեռքբերման հետևանքով առաջացող համակենտրոնացման սահմանման դեպքերը թերի են: Երկրորդ՝ բաց են մնացել այն դեպքերը, երբ կողմերը մտնում են պայմանագրային հարաբերությունների մեջ և սահմանում են դրույթներ (օրինակ՝ կանոնադրության մեջ), որոնք, փաստացի, հանգեցնում են համակենտրոնացման, կամ նման համակենտրոնացում տեղի է ունենում գործող օրենսդրության ուժով: Օրի-

նակ, երբ կանոնադրությամբ սահմանվում են բաժնետերերի կողմից կարևոր ռազմավարական որոշումները համատեղ ընդունելու մասին դրույթներ, ինչը հնարավորություն է տալիս կողմերին համատեղ իրականացնել տնտեսավարող սուբյեկտի վերահսկողությունը: Դրանից բացի, պետք էր տարանջատել քվեարկող հասարակ բաժնետոմսերն արտոնյալ բաժնետոմսերից: Այս և մի շարք այլ խնդիրներ լուծելու նպատակով հեղինակն առաջարկում է սահմանել մեկ կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների կողմից մեկ այլ տնտեսավարող սուբյեկտի կամ դրա մի մասի ուղղակի կամ անուղղակի վերահսկողության ցանկացած միջոցի ձեռքբերման տարբերակը, որը նախ կընդգրկեր համակենտրոնացման մի շարք դեպքեր և գործնականում որոշակիություն կմտցներ: Վերջապես այն նաև հնարավորություն կտար տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմնին՝ Հանձնաժողովին, ինչպես նաև դատարաններին կոնկրետ գործով յուրահատուկ մոտեցում ցուցաբերելու և ամեն դեպքում վեր հանելու այս կամ այն գործարքի համակենտրոնացում լինել կամ չլինելը: Առաջարկվում է նաև առանձին կարգավորել համատեղ ձեռնարկությունների համակենտրոնացման հետ կապված հարցերը:

**Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում**՝ «Համակենտրոնացումը կարգավորող եվրոպական իրավունքի զարգացումը մրցակցային իրավունքի համատեքստում» վերտառությամբ, հեղինակն անդրադառնում է Եվրոպական մրցակցային իրավունքի՝ մասնավորապես համակենտրոնացումները կարգավորող եվրոպական իրավունքի ձևավորմանը, զարգացմանը և միտումներին: Հեղինակն ուսումնասիրությունը սկսում է իրականացնել հիմնադիր պայմանագրերում տնտեսական մրցակցությանը, մասնավորապես համակենտրոնացումներին վերաբերող դրույթների ամրագրումից: Ուսումնասիրելով համակենտրոնացման վերաբերյալ դրույթների ամրագրման և զարգացման գործընթացը՝ կարևորվում են ոչ միայն դրանց իրավական, այլև տնտեսական և քաղաքական հիմքերը:

Հեղինակը գալիս է եզրահանգման, որ Հռոմի պայմանագրում ամրագրված մրցակցային իրավունքի վերաբերյալ դրույթները չստեղծեցին համակարգ, սակայն այն իր հետագա զարգացումը ստացավ եվրոպական տարբեր իրավական ակտերում: Այն ձևավորվեց քաղաքական ու տնտեսական գաղափարների և շահերի փոխհարաբերության արդյունքում: Այս համակարգը ձևավորելիս գլխավոր նպատակն էր անդամ պետությունների տնտեսական ինտեգրացիոն գործընթացի արագացումը, և դա էլ ստեղծեց այդ պահանջներին համահունչ համակարգ: Այս գործընթացի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ մրցակցային իրավունքը եղել է և, ամենայն հավանականությամբ, տեսանելի ապագայում կմնա ավելի շատ վերազգային կազմակերպության, քան մեկ պետության մրցակցային իրավունք:

Ուսումնասիրության է ենթարկվել նաև համակենտրոնացումները կար-

գավորող կոնկրետ իրավական ակտերի ընդունման, զարգացման և փոփոխման գործընթացը: Մասնավորապես, 1989 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված N 4064/89 կանոնակարգը և 2004 թվականի հունվարի 20-ին վերջինիս փոխարինած համակենտրոնացումների վերահսկողության մասին N 139/2004 կանոնակարգը:

Հեղինակն անդրադարձ է կատարել նաև Եվրոպական Միության և անդամ պետությունների մրցակցային օրենսդրության փոխհարաբերությանը, զուգահեռներ անցկացրել դրանց միջև: Աշխատության այս հատվածում ընդգծվում է, որ արագացող ինտեգրացիոն գործընթացները նոր ճնշում էին գործադրում իրավասության՝ գոյություն ունեցող բաժանման վրա, և այն հանգամանքը, որ Համայնքի անդամ պետությունները շարժվում էին դեպի ինտեգրացիայի ավելի բարձր մակարդակներ, գործողության մեջ դրեցին երկու՝ երբեմն իրար հակասական գործընթացներ. կենտրոնամետ, որի նպատակը իշխանության կենտրոնացումն էր Բոյուսելում ու Լյուքսեմբուրգում, և կենտրոնախույս, որը կոչված էր անդամ պետությունների իրավասության բարձրացմանը:

Եվրոպական մրցակցային օրենսդրության գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրա՝ ազգային հակամենաշնորհային օրենսդրությունների հետ մեկտեղ համակարգային կիրառման մեջ: Եվրոպական մրցակցային օրենսդրությունն իր պատմության ընթացքում ենթարկվել է բազմաթիվ տնտեսական դպրոցների և ուղղությունների ազդեցությանը, որի արդյունքում գտնվել է անընդհատ փոփոխությունների մեջ: Միգուցե սա էլ հանդիսանում է այն պատճառը, որ մրցակցային օրենսդրությունը շատերի կողմից ճանաչվում է որպես Եվրոպական օրենսդրության ամենազարգացած և մշակված իրավական համակարգերից մեկը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** (Համակենտրոնացման մեջ ներգրավված սուբյեկտները և համապատասխան շուկայի հատկորոշումը Եվրոպական Միությունում) բաղկացած է երկու պարագրաֆից:

**Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում**՝ «Համակենտրոնացման մեջ ներգրավված սուբյեկտները ԵՄ-ում» վերտառությամբ, համակարգված ներկայացված են տնտեսական մրցակցության մեջ ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները և դրա հիմքի վրա համակենտրոնացման մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտները: Հեղինակը տնտեսավարող սուբյեկտներին բնորոշելու համար ուսումնասիրել է մի շարք հանգամանքներ, մասնավորապես սուբյեկտի տնտեսական գործունեությամբ զբաղված լինելը, իրավական կարգավիճակի հետ կապված հարցերը և ֆունկցիոնալ մոտեցումը:

Այնուհետև եզրակացրել է, որ չնայած այն հանգամանքին, որ տնտեսավարող սուբյեկտների հասկացության սահմանումը ԵՄ-ի տնտեսական մրցակցությանը վերաբերող իրավական ակտերում չի սահմանվում, սակայն այն պարզաբանվում է բազմաթիվ դատական նախադեպերով: Վերլուծելով



«տնտեսավարող սուբյեկտ» հասկացության շուրջ ձևավորված տեսակետները և մոտեցումները՝ կարելի է ասել, որ տնտեսավարող սուբյեկտներ են ֆիզիակական անձինք և բոլոր կազմակերպատիրավական միավորները՝ անկախ կազմակերպատիրավական միավորի իրավական կարգավիճակից և նրա ֆինանսավորման եղանակից, որոնք զբաղված են տնտեսական գործունեությամբ: Ընդ որում, ԵՄ-ի մրցակցային օրենսդրությունը չափանիշներ է սահմանել նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության համար. այն պետք է պատկանի տնտեսական գործունեության ոլորտին և կապված չլինի պետական մարմինների իրավասությունների իրականացման հետ: Այսպիսով, ԵՄ-ի մրցակցային օրենսդրության մեջ «տնտեսավարող սուբյեկտ» հասկացությունը համընդգրկուն և բազմաբովանդակ հասկացություն է:

Իսկ ինչ վերաբերում է ԵՄ-ի համակենտրոնացումների մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտներին, ապա եվրոպական օրենսդրությունը լրացուցիչ պահանջներ է առաջադրում, ինչը կապված է վերջիններիս շրջանառության չափի և կոնկրետ գործարքներում դրանց ընդգրկվածության հետ:

Պարագրաֆի վերջում անդրադարձ է կատարվել նաև ներպետական օրենսդրության մեջ տնտեսավարող սուբյեկտների սահմանմանը: Ի տարբերության ԵՄ-ի օրենսդրության՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը հիմնական հասկացությունների շարքում սահմանել է նաև «տնտեսավարող սուբյեկտ» հասկացությունը:

**Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆը՝** «Համապատասխան շուկայի հատկորոշումը և դրա ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմանները» վերտառությամբ, նվիրված է համապատասխան շուկաների սահմանմանը և դրանց ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմանների որոշմանը: Համապատասխան շուկաները բնորոշելիս անդրադարձ է կատարվել դասական «սահմանափակումների» մոտեցմանը, մասնավորապես պահանջարկի փոխադարձ փոխարինելիությանը, առաջարկի փոխադարձ փոխարինելիությանը և հնարավոր մրցակցությանը: Այնուհետև քննարկվել է այսպես կոչված SSNIP (Small but Significant Non-transitory Increase in Price (փոքր, բայց ոչ անցողիկ գնի բարձրացում) թեստի կիրառումը:

Գիտահետազոտական վերլուծությունները բերել են այն համոզմանը, որ շուկայի սահմանման մասին պարզաբանման մոտեցումն ապրանքային շուկայի սահմանման առումով թողում է հայեցողական մոտեցման դրսևորման մեծ հնարավորություն: Դժվար է կանխատեսել, թե կոնկրետ գործում Հանձնաժողովն ինչպես է որոշելու ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները: Դա նշանակում է, որ տնտեսավարող սուբյեկտների համար էլ ավելի դժվար է համապատասխան շուկանե-

րի վերաբերյալ եզրակացություններ կայացնելը: Ճիշտ է, հստակ սահմանված են այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնել շուկայի սահմաններն որոշելիս, սակայն սահմանված չէ այդ հանգամանքների միջև հիերարխիան: Այսինքն՝ ամեն անգամ այս կամ այն հանգամանքի կիրառումը կախված է կոնկրետ գործից: Պրակտիկայում այն ուղիները, որոնցով շուկաները վերջին հաշվով սահմանվում են, լայն առումով կախված է ոչ թե մանրամասն և պրոֆեսիոնալ տնտեսական վերլուծությունից, որի համար սովորաբար չկա բավարար ժամանակ, այլ հիմնված նախնական տեղեկատվության վրա, որը հասանելի է Հանձնաժողովին կամ տրամադրվում է շահագրգիռ բիզնեսների կողմից կամ երրորդ անձանց կողմից:

Այնուհետև հեղինակը եզրակացնում է, որ ԵՄ-ում համապատասխան շուկայի սահմանները որոշելիս բավական մեծ աշխատանք է կատարվել, սակայն դեռևս առկա են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, շուկայի սահմանման մասին պարզաբանման մոտեցումն ապրանքային շուկայի սահմանման առումով թողնում է հայեցողական մոտեցման դրսևորման մեծ հնարավորություն և գործնականում բավական դժվար է տնտեսավարող սուբյեկտների համար հասկանալ, արդյոք իրենց ապրանքները պատկանում են միևնույն ապրանքային շուկային, թե ոչ, ինչն իր հերթին հանգեցնում է համակենտրոնացման վերաբերյալ չհայտարարագրման կամ ունենում է հակառակ ռեակցիան, ավելորդ տուգանքներից խուսափելու համար առանց լուրջ վերլուծություն կատարելու համակենտրոնացման հայտարարագրման:

Պարագրաֆի վերջում անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ խնդրի կարգավորմանը, և վերլուծելով այն՝ հեղինակը հիմնավորում է, որ պետք է սահմանել ապրանքի հատկանիշների հիման վրա շուկայի սահմանները որոշելու սկզբունքի կիրառությունը նաև աշխարհագրական սահմանները որոշելիս, ապրանքի հատկանիշների բովանդակությունը, հիերարխիան, ինչպես նաև գնի փոքր, բայց կայուն աճի կիրառման մեխանիզմները:

Ատենախոսության ***երրորդ գլուխը*** (Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացման նկատմամբ վերահսկողությունը Եվրոպական Միությունում) բաղկացած է երկու պարագրաֆից:

**Երրորդ գլխի առաջին պարագրաֆը՝** «Համակենտրոնացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները ԵՄ-ում և անդամ պետություններում» վերտառությամբ, հեղինակը մանրամասն ուսումնասիրում է համակենտրոնացման նակտամամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, անդրադառնում է նրանց տեղին և դերին, գործառույթներին: Ուսումնասիրությունները թույլ են տալիս նշել, որ համակենտրոնացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների լիազորությունների բաշխման հարցում 139/2004 կանոնակարգը համակցում է երկու մոտեցում: Առաջին՝ այն սահմանում է Հանձնաժողովի, ազգային մրցակցային

մարմինների և ազգային դատարանների համագործակցության ապակենտրոնացված մոտեցում: Երկրորդ՝ այն տալիս է Հանձնաժողովին լայն լիազորություններ մրցակցային հարցերի քննության համար և ավարտում է անցումը ex ante հսկողությունից դեպի ex post:

Հեղինակը գտնում է, որ ԵՄ համակարգի քննադատումը, կապված մրցակցային իրավունքի հետ, կենտրոնանում է Հանձնաժողովի խաղացած բազմանշանակ դերով: Խնդիրը կայանում է նրանում, որ չկա տարանջատում ուսումնասիրություն անցկացնողի, որոշում մշակողի և տուգանք նշանակողի միջև:

Աշխատանքում մանրամասն անդրադարձ է կատարվում նաև անդամ պետությունների վերահսկողություն իրականացնող մարմիններին՝ նշելով, որ պետք է ավելի մանրամասն և գործնական դրույթներ սահմանել, թե ինչպես ազգային մրցակցային մարմինների միջև սերտ համագործակցությունը պետք է տեղի ունենա: Ինչպես նաև ապակենտրոնացումն իր նպատակին հասցնելու և մրցակցային կանոններն ավելի հստակ կիրառելու համար անհրաժեշտ է ավելի հստակ լիազորություններ տալ ազգային մրցակցային մարմիններին: Նաև պետք է տարանջատել վերահսկողության իրականացման տարբեր փուլերում ընդգրկված մարմիններին, ինչն ավելի ժողովրդավար կդարձնի համակենտրոնացումների ուսումնասիրությունը:

**Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝** «Օրենսդրության խախտմամբ գործողության մեջ դրված համակենտրոնացումների բացահայտումը և իրավական հետևանքները» վերտառությամբ, անդրադարձ է կատարվել համակենտրոնացումների նկատմամբ կիրառվող իրավական հետևանքներին, որոնք պայմանականորեն բաժանվել են երկու խմբի՝ արգելված համակենտրոնացումների նկատմամբ կիրառվող իրավական հետևանքներ և տուգանքներ:

Արգելված համակենտրոնացումների նկատմամբ կիրառվող իրավական հետևանքների համատեքստում անդրադարձ է կատարվել համակենտրոնացումների լուծարմանը կամ համապատասխան վերականգնողական միջոցառումներին:

Այնուհետև ուսումնասիրվել են տուգանքների նշանակման հետ կապված հարցերը: Հեղինակն անդրադարձել է այն հարցին, որ ի տարբերություն ԱՄՆ-ի և ԵՄ որոշ անդամ պետությունների՝ ԵՄ մրցակցային իրավունքը չի սահմանում որևէ տեսակի սանկցիա ֆիզիկական անձանց նկատմամբ (բացառությամբ այն դեպքերի, երբ ֆիզիկական անձը հանդես է գալիս որպես տնտեսավարող սուբյեկտ), այսպես ասած՝ այն չի պատժում անհատներին: Ըստ հեղինակի՝ ԵՄ մրցակցային կանոնների խախտման համար անհատների պատասխանատվության սահմանումը կարող է ներդրվել ԵՄ-ում միայն ներդաշնակեցման գործընթացներից հետո, որը կհանգեցնի յուրաքանչյուր անդամ պետության կողմից իր օրենսդրությամբ նման պատասխանատվություն սահմանելուն:

**Եզրակացության** մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնք հանգում են հետևյալին.

- Համակենտրոնացումն իր մեջ ներառում է երեք տեսակի գործարքներ: Համակենտրոնացում է համարվում երկու կամ ավելի անկախ տնտեսավարող սուբյեկտների կամ դրանց մասերի միջև միաձուլումը, մեկ կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների կողմից մեկ այլ տնտեսավարող սուբյեկտի կամ դրա մի մասի ուղղակի կամ անուղղակի վերահսկողության ցանկացած միջոցի ձեռքբերումը և համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, որոնք գործում են որպես կայուն հիմքով անկախ տնտեսական միավոր: Համակենտրոնացման գործընթացում օգտագործվող մի շարք հասկացություններ, ինչպիսիք են «հսկողություն», «վերահսկող ազդեցություն», հստակեցման կարիք ունեն: Ոչ բոլոր անդամ պետություններն ունեն «հսկողության» կամ «վերահսկող ազդեցության» հստակ սահմանում, ինչը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք կարող է տալ:

- Առկա են տարաբնույթ կարգավորումներ՝ նաև համակենտրոնացման մեջ ներառվող համատեղ ձեռնարկության տեսակների հետ կապված: Որոշ անդամ պետություններ կարգավորման են ենթարկում նաև փոքր համատեղ ձեռնարկությունները: Խնդիրներ առկա են նաև ԵՄ մակարդակում: Երբ անհրաժեշտություն է առաջանում որոշելու համատեղ ձեռնարկության նկատմամբ օրենսդրությամբ սահմանված շրջանառության չափանիշները, ապա հաշվի է առնվում բոլոր հիմնական ընկերությունների շրջանառությունը: Այսպիսով, համակենտրոնացումը, որը կապված է համատեղ ձեռնարկությունում վերահսկողության փոփոխման կամ նոր համատեղ ձեռնարկության ստեղծման հետ, կարող է բավարարել օրենսդրությամբ սահմանված շրջանառության չափանիշներին՝ պարզապես հիմնվելով հիմնական ձեռնարկությունների շրջանառության վրա: Արդյունքում հնարավոր է, որ համատեղ ձեռնարկությունը, որի գործարարական գործունեությունն որևէ կապ չունի ԵՄ-ի հետ, կընկնի ԵՄ համակենտրոնացումների կարգավորման ներքո բացառապես ԵՄ շրջանառության հետ չկապված հիմնական ընկերությունների շրջանառության հիման վրա: Նման համակենտրոնացումների հայտարարագրման հետ կապված ժամանակի և այլ ռեսուրսների ծախսն ավելորդ բեռ է հանդիսանում տնտեսավարող սուբյեկտների և Հանձնաժողովի համար: Նման հայտարարագրման պահանջը հակասում է միջազգային հանրային իրավունքի սկզբունքներին, ինչպես նաև միջազգային մրցակցային ցանցի կողմից համակենտրոնացումների հայտարարագրման և ուսումնասիրման գործընթացի համար առաջարկվող պրակտիկայում ամրագրված սկզբունքներին: Խնդիրը կարելի է լուծել՝ սահմանելով, որ համակենտրոնացումները, կապված համատեղ ձեռնարկությունների հետ, հանդիսանում են 139/2004 կանոնակարգի ուսումնասիրության առարկա, եթե վերջիններս Եվրոպական Միությունում ունենում են որոշակի աստիճանի շրջանառություն: Սա կտա հնարավորություն ընդհանուր շուկայի վրա էա-

կան ազդեցություն չունեցող համատեղ ձեռնարկությունների հայտարարագրումից զերծ մնալ:

- Երկու երրորդ պահանջը կորցրել է իր էֆեկտիվությունը, և այն անհրաժեշտ է հանել: Նախ և առաջ՝ ընդհանուր շուկայի զարգացման պայմաններում ազգային մեծ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը կարող է ունենալ էական ազդեցություն Միության շուկայի վրա: Այս դեպքերում Հանձնաժողովը չպետք է հրաժարվի նման համակենտրոնացումների ուսումնասիրությունից: Երկրորդ՝ անդամ պետությունները կարող են օգտագործել այս դրույթը «ազգային չենափոհների» ստեղծման կամ նրանց դիրքերի ամրապնդման համար: Այս խնդիրը հատկապես առկա է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հեռահաղորդակցությունը, էներգետիկան, ֆինանսական ծառայությունները և այլն, որոնք, թեկուզև գտնվելով մեկ պետության տարածքում, կարող են էական ազդեցություն ունենալ ամբողջ Միության շուկայի վրա:

- Մի շարք հասկացություններ, ինչպիսիք են «հսկողություն», «վերահսկող ազդեցություն», հստակեցման կարիք ունեն: Առկա են տարաբնույթ կարգավորումներ՝ նաև համակենտրոնացման մեջ ներառվող համատեղ ձեռնարկության տեսակների հետ կապված: Ոչ բոլոր անդամ պետություններն ունեն «հսկողության» կամ «վերահսկող ազդեցության» հստակ սահմանում: Օրինակ, «վերահսկող ազդեցություն» տերմինը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Այսպիսով, ցանկացած փաստական, տնտեսական կամ իրավական միջոց, որը հնարավորություն է տալիս մասնակցել տնտեսավարող սուբյեկտի կառավարմանը կարող է համարվել վերահսկող ազդեցություն:

- Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության գործընթացում հանձնաժողովը պահպանում է իր կենտրոնական դերը: 139/2004 կանոնակարգը սահմանում է մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս գործի ուսումնասիրության փոխանցումը անդամ պետությունից Հանձնաժողովին: Սակայն սահմանված մեխանիզմների կիրառումը գործնականում ոչ միշտ է լինում նպատակահարմար: Այն խոչընդոտներ է ստեղծում ինչպես տնտեսավարող սուբյեկտների, այնպես էլ անդամ պետությունների համար: Խնդիրներ առկա են համայնքային մեծություն չունեցող և առնվազն երեք անդամ պետությունների ազգային օրենսդրության ուսումնասիրության ենթակա համակենտրոնացումը Հանձնաժողովի ուսումնասիրության հանձնելու գործընթացում անդամ պետությունների կողմից վետոյի իրավունքի կիրառման հետ: Խնդիրներ կան նաև մեկ կամ ավել անդամ պետությունների կողմից Համայնքային մեծություն չունեցող, սակայն անդամ պետությունների միջև առևտրի վրա ազդող համակենտրոնացումների ուսումնասիրությունը Հանձնաժողովին հանձնելու գործընթացում: Նախ և առաջ՝ անհրաժեշտ է ազգային օրենսդրությունների մոտարկում և վերոնշյալ հարցերում հստակեցում: Երկրորդ՝ ԵՄ օրենսդրության զարգացման արդյունքում արդի

փուլում այս մեխանիզմների կիրառման ձևաչափն անհրաժեշտ է փոփոխությունների ենթարկել և սահմանափակել:

- Մրցակցային օրենսդրությունը խախտող ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք հանդես են գալիս որպես տնտեսավարող սուբյեկտի աշխատող կամ պաշտոնատար անձ, վարչական պատասխանատվություն կիրառելը բավականաչափ զգոնություն կնտցնի: Որոշ իրավախախտումներ մեծամասամբ կապված են լինում նման աշխատակիցների կամ պաշտոնատար անձանց վարքագծի հետ, և նրանց պատասխանատվությունը կունենա մեծ կանխարգելիչ դեր:

- Հայաստանի Հանրապետությունը շարժվում է Եվրոպական Միության ինտեգրման ուղով: Եվրոպական տնտեսական ընտանիքի լիիրավ անդամ լինելու և մրցունակ տնտեսավարող սուբյեկտներ ունենալու համար անհրաժեշտ են մրցակցային օրենսդրության, մասնավորապես տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը կարգավորող իրավական համակարգի բարեփոխումներ և օրենսդրության մոտարկում: Այդ իսկ պատճառով տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացմանն առնչվող օրենքների, այլ իրավական ակտերի և օրենսդրությանն առնչվող հիմնահարցերի ուսումնասիրությունը խիստ կարևորվում է, քանի որ, եթե համեմատում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգը Եվրոպական Միության, ինչպես նաև անդամ պետություն հանդիսացող մի շարք երկրների համակենտրոնացումները կանոնակարգող օրենսդրական դաշտի հետ, ապա նկատում ենք, որ կան մի շարք թերություններ և բացթողումներ, իսկ համակարգի զարգացումը պահանջում է նույնականացված և պարզեցված օրենսդրական դաշտի առկայություն: Այս հիմնահարցերին հայեցակարգային, հիմնավոր և հեռանկարային լուծումներ տալու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել ոլորտի վերաբերյալ Եվրոպական Միության հսկայական փորձը:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝**

1. Համակենտրոնացման հասկացությունը և տեսակներն Եվրոպական Միությունում // Հանրային կառավարում գիտական հանդես, 1/2011, Երևան, 2011, էջեր 152-161:

2. Մրցակցային իրավունքի սուբյեկտները Եվրոպական Միությունում // Արդարադատություն գիտական հանդես, Հունիս 2 (17), Երևան, 2012, էջեր 65-72:

3. Համակենտրոնացման մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտները Եվրոպական Միությունում // Հանրային կառավարում գիտական հանդես, 3/2012, Երևան, 2012, էջեր 101-108:

4. Շուկայի հասկացությունը և դրա սահմանները Եվրոպական Միությունում // Արդարադատություն գիտական հանդես, Դեկտեմբեր 4 (19), Երևան, 2012, էջեր 30-34:

ГЕГАМ ГЕВОРГЯН ВАРДАНОВИЧ  
ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ  
КОНЦЕНТРАЦИИ В ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ  
РЕЗЮМЕ

Диссертация посвящена правовому регулированию концентрации в Европейском Союзе и существующим в данной сфере проблемам. Автор в результате исследовательской работы представил ряд научных заключений, которые дают возможность нового восприятия изучаемых проблем. В диссертации на научном уровне представлены особенности всех видов сделок по концентрации, а также критерии, на основании которых определяется подпадает ли концентрация под регулирование ЕС. Автор отмечает наличие необходимости гармонизации понятия концентрации в законодательстве ЕС и государств-членов ЕС. В частности, данные государства должны гармонизировать свое законодательство с законодательством ЕС, что сделает возможным осуществлять более эффективный контроль над концентрациями.

В работе также рассматриваются субъекты, вовлеченные в конкурентные правоотношения и субъекты, которые вовлечены в конкретную концентрацию. На данном этапе особое внимание уделяется соотношению понятий «хозяйствующие субъекты», «юридическое лицо», «компания», а так же представляется круг хозяйствующих субъектов с точки зрения законодательства ЕС о конкуренции и особенностях их участия в конкурентных правоотношениях. Необходимо отметить, что предмет изучения автор рассматривает не только в теоретическом, но и в практическом аспекте.

В диссертации подчеркивается значимость определения рынка в контексте регулирования концентрации. В работе особое внимание уделяется определению товарного и географического рынка, применению различных инструментов и критериев в данном процессе. Одновременно представляется ряд существующих проблем при определении соответствующего рынка ЕС и возможные пути их решения.

Научная новизна диссертации отражена в следующих основных результатах:

1. Предметом регулирования регламента 139/2004 следует установить концентрации связанные с совместными предприятиями при условии, если последние имеют определенный объем обращения в ЕС. Это позволит исключить нотификацию full-function совместных предприятий, не имеющих существенного воздействия на общий рынок.

2. Необходимо установить иерархию фактов, оцениваемых при определении Комиссией границ определенного рынка в ЕС. В частности, особую важность имеют назначение и цена товара.

Что касается законодательства РА, то необходимо установить, что принцип определения границ рынка на основании признаков товара

применяется и для определения географических границ рынка. Во-вторых, необходимо определить их содержание, иерархию фактов, а также механизм небольшого, но стабильного роста цен.

3. Что касается положения о передаче на рассмотрение Комиссии концентрации между одним или несколькими государствами, не имеющими значения в масштабе сообщества, но влияющих на торговлю между государствами-членами, то оно подлежит применению лишь при отсутствии соответствующего национального законодательства или отсутствии соответствующих полномочий у национальных антимонопольных органов. При этом применение положения должно иметь временный характер и при наличии определенной степени гармонизации национального законодательства с регулированием ЕС оно должно утратить силу.

4. По ряду вопросов, касающихся концентрации, гармонизация законодательства государств - членов ЕС не привела к желанным результатам в области их единообразного применения, а в некоторых случаях произошло различное по своему содержанию регулирование, что конечно, не может отрицательно не отразиться на конкурентоспособности субъектов экономической деятельности.

Таким образом, следует продолжать процесс гармонизации законодательства ЕС и государств – членов в области конкуренции, и в частности концентрации, оставляя преимущество за наднациональным регулированием.

5. В законодательства РА также присутствуют проблемы, связанные с понятием концентрации и его содержанием. С целью решения данных проблем предлагается закрепить возможность прямого или косвенного приобретения контроля над хозяйствующим субъектом со стороны одного или нескольких хозяйствующих субъектов, содержащую несколько случаев концентрации и внесло бы определенность в понятие концентрации. Наконец, это позволило бы государственному органу по защите конкуренции – Комиссии, а также суду, применить индивидуальный подход по конкретному делу, выявляя в каждом конкретном случае наличие или отсутствие концентрации. Необходимо также урегулировать проблему совместных предприятий, положения относительно которых отсутствуют.

Кроме заключений представленных на защиту в диссертационном исследовании были изложены многочисленные научно-профилактические предложения, которые направлены на усовершенствование как законодательства, так и правоприменительной практики.



GEGHAM GEVORGYAN  
THE ISSUES OF CONCENTRATION'S LEGAL REGULATION  
RESUME

The thesis is dedicated to the issue of legal regulation of concentration within the EU and present problems of the realm. The author's research resulted in a row of scientific conclusion, due to which one acquires new perception of the given problems. The thesis represents in scientific level the peculiarities of the whole kinds of concentration deals alongside with the criterion in accordance with which it becomes clear whether the concentration undergoes the EU regulation or not. The author highlights the necessity of harmonization of the concept of concentration in the legislation of the EU and member-states. In particular, the aforesaid states must harmonize their legislation with that of the EU. Thanks to this it will become possible to implement a more efficient system of control over the concentrations.

Also the author touches upon the issue of entities involved in competitive legal relations and undertakings involved in concrete concentration. In this stage such concepts as "undertakings", "legal person", and "company" are in the centre of the author's attention. Also he introduces the circle of undertakings from the viewpoint of the EU legislation on competitiveness and peculiarities of their participation in competitive legal relations. It should be noted that the object of study is introduced both from the theoretical and practical points of view.

Among other things the author lays a heavy emphasis on the definition of relevant market in the light of regulation of concentration. He also pays special attention on the definition of the product and geographical market, implementation of various instruments and criteria in this process. Also there has been introduced a row of problems, which appear during the definition of the relevant market of the EU and the possible ways of their resolution.

The scientific novelty of the thesis is reflected in the following basic results:

1. It should be stated that regulation 139/2004 targets concentrations linked with each other with joint ventures, if the given enterprises have certain turnover in the EU. This will allow excluding the notification of full-function of joint ventures, which have no palpable influence on the common market;

2. It's of a certain importance to fix hierarchy of facts assessed during the discovery of limits of a concrete market in the EU. Particularly, the price of a product and its fixation play a significant role. As to the Ra legislation, than it's necessary to state that the principle of defining the limits of the market based upon the peculiarities of the product, is used for the definition of the geographic limits of the market as well. Secondly, their content, hierarchy, and mechanism of small, but steadfast rise in price are to be defined.

3. As to the point about passing to the Commission's review the concentration between one or several states, which play no significant role in frames of the community, but can influence the trade between the member-states, than it should be implemented only in case of absence of the corresponding national legislation or if the national anti-monopoly bodies are not authorized to take necessary measures. At the same time, the implementation of these points should bear merely temporary character and should be put aside in case of certain degree of the legislation's harmonization with the EU regulations.

4. In respect of a row of issues on concentration of harmonization of the EU member-states' legislation did not produce the desirable results in the sphere of their monotonous usage and in some cases we faced varied regulation, which, by all means, could not have no negative impact on the competitiveness of entities engaged in commercial activity.

Therefore, the process of harmonization of the EU legislation and that of the member-states should be continued in the field of competitiveness and the concentration sphere in particular, giving advantage to the transnational regulation.

5. Also there are certain problems regarding the concept of concentration and its meaning in the RA legislation. Targeting the solution of the abovementioned problems, it is suggested to fix the possibility of the acquisition of direct or indirect control of the whole or parts of one or more other undertakings by one or more undertakings involving several cases of concentration, which would contribute to distinctness. And finally, this will enable the state body on protection of competitiveness – the Commission and the court as well to implement individual approach to the concrete case whether there is competitiveness or not. It's also necessary to regulate the problem of joint enterprises, as there are no provisions about them.

Alongside with the conclusions introduced in the research, the author represented a number of scientific and prophylactic suggestions targeting both the accomplishment of the legislation and law-enforcement practice.